ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Խ-430-20.12.2019-ՏՏԳԲ-011/0*)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Առաջարկության հեղինակը	*Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը*	*Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)*	*Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը*	*Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը*
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածով օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսվող 23.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «23.1) իր որոշմամբ հավանություն է տալիս նվիրատվության ընդունմանն այն դեպքում, երբ համայնքը նվիրառու է, ինչից հետո միայն համայնքի ղեկավարն իրավասու է կնքելու նվիրատվության պայմանագիրը.»	Ընդունվել է, կատարվել է լրացում	Ընդունվել է
Հայաստանի Հանրապետության կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	առաջարկում ենք սահմանել ավագանու հավանությանը ներկայացվելիք նվիրատվության գումարի (ապրանքների դեպքում՝ արժեքի) ստորին շեմ՝ այդ շեմից ցածր գումարի (արժեքի) դեպքում ավագանու նիստ հրավիրելու անհրաժեշտությունը բացառելու համար:	Ընդունվել է, կատարվել է լրացում	Ընդունվել է